ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյան**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Երվանդ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության**
  - **փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝** **Աննա Միքայելյանի**
  - **հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝** **Տաթևիկ Մկրտչյանի**

Քննարկվեց՝

09. 06. 2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա այլ հրատապ խնդիրներ:

1. Փաստացի ավարտված սակայն ավարտական ակտ չստացած սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց աղյուսակի տեսքով.

Մեծամոր

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Կատարված աշխատանքներ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ձևակերպման վերաբերյալ ձեռնարկվող գործողություններ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ առկայությունը*
1	Մեծամոր	Այգեշատ բնակավայրի գազաֆիկացում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է, շին կազմակերպությունը ունի լիցենզիային խնդիր	առկա չէ
2	Մեծամոր	Եղեգնուտ բնակավայրի գազաֆիկացում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է, մեկ դիմում ներկայացվել ՀՀ ՔՏՄ	առկա չէ
3	Մեծամոր	Տարոնիկ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ	100% - ավարտված (2024թ.)	Ընթացքի մեջ է, դիմումը ներկայացված է	առկա չէ

Արաքս

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Կատարված աշխատանքներ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ձևակերպման վերաբերյալ ձեռնարկվող գործողություններ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ առկայությունը*
1	Արաքս	Գայ գյուղի համայնքապետարանի շենքի հիմնանորոգում	100% - ավարտված (2024թ.)	Ընթացքի մեջ է,Սպասում ենք հանձնաժողովի ակտի հաստատմանը:	առկա չէ
2	Արաքս	Ապագա գյուղի մարզադպրոցի վերանորոգում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է, առկա են որոշ անհամաձայնություններ	առկա չէ
3	Արաքս	Ապագա գյուղի այգու կառուցապատում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է, առկա են որոշ անհամաձայնություններ	առկա չէ

4	Արաքս	Ջրառատ գյուղի Թումանյան, Վ.Մամիկոնյան, Իսահակյան փողոցների գազիֆիկացում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է	առկա չէ
5	Արաքս	Ջրառատ գյուղի ջրամատակարարման ցանցի կառուցում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է,Ընթացքի մեջ է,չափագրված չէ:Չափագրումները դեռևս չեն սկսվել քանի որ մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ չի կնքվել պայմանագիր:Պատճառը դեռևս անգործության փուլում գտնվելն է	առկա չէ
6	Արաքս	Առատաշեն գյուղի մանկապարտեզի երկհարկանի մասնաշենքի կապիտալ վերանորոգում	100% - ավարտված (2022թ.)	Ընթացքի մեջ է	առկա չէ
7	Արաքս	Խորոնք գյուղի մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է,Սպասում ենք հանձնաժողովի ակտի հաստատմանը:	առկա չէ
8	Արաքս	Ջրառատ գյուղի մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	100% - ավարտված (2023թ.)	առկա չէ,Խնդիրը կայանում է նրանում որ շինարարը չի կարողանում էլեկտրոնային ստորագրել	առկա չէ

Խոյ

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Կատարված աշխատանքներ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ձևակերպման վերաբերյալ ձեռնարկվող գործողություններ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ առկայությունը*
1	Խոյ	Այգեշատ գյուղի Երիտասարդական և Մայիսյան փողոցների ասֆալտապատում	100%- ավարտված է (18.09.2024թ.)	ավարտական ակտը ներկայացվել է տեսչական մարմնի հաստատմանը	առկա չէ

2	Խոյ	Լեռնամերձ գյուղի Բարեկամություն փողոցի /գերեզմաններ տանող ճանապարհ/ ասֆալտապատում	100% - ավարտված (2024թ.)	օբյեկտը չափագրվել է լիցենզավորված կազմակերպության կողմից, հատակագիծը ստանալուց հետո կգեներացվի ընդունող հանձնաժողովի ակտը	առկա չէ
3	Խոյ	Մոնթեավան գյուղի 1-ին և 7-րդ փողոցների գազիֆիկացում	100% - ավարտված (2024թ.)	կառուցված միջին ճնշման գազատարը ներկայացվել է տեսչական մարմին գործարկման եզրակացություն ստանալու նպատակով, որից հետո կկազմվի ընդունող հանձնաժողովի ակտը	առկա չէ
4	Խոյ	Արագած գյուղի մշակույթի տան 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգում և ջեռուցում	100% - ավարտված (2024թ.)	կազմվում են ավարտական փաստաթղթերը	առկա չէ

Փարաքար

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Կատարված աշխատանքներ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ձևակերպման վերաբերյալ ձեռնարկվող գործողություններ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ առկայությունը*
1	Փարաքար	Փարաքար բնակավայրի փողոցների ասֆալտապատում	100% - ավարտված (2024թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
2	Փարաքար	Այգեկ բնակավայրի փողոցների ասֆալտապատում	100% - ավարտված (2022թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
3	Փարաքար	Բաղրամյան բնակավայրի փողոցների ասֆալտապատում	100% - ավարտված (2022թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
4	Փարաքար	Փարաքար բնակավայրի փողոցի /Սևան/ տուֆով սալարկման շինարարական աշխատանքներ	100% - ավարտված (2024թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
5	Փարաքար	Բաղրամյան բնակավայրի փողոցի տուֆով սալարկման շինարարական աշխատանքներ	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ

6	Փարաքար	Այգեկ բնակավայրում խաղահրապարակի կառուցում և գոյություն ունեցող խաղահրապարակի վերանորոգում և վերազինում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
7	Փարաքար	Նորակերտ բնակավայրում խաղահրապարակի կառուցում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
8	Փարաքար	Բաղրամյան բնակավայրում խաղահրապարակի կառուցում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
9	Փարաքար	Արևաշատ բնակավայրում գոյություն ունեցող խաղահրապարակի վերանորոգում և վերազինում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
10	Փարաքար	Մուսալեռ բնակավայրում 2 խաղահրապարակների կառուցում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
11	Փարաքար	Մերձավան բնակավայրում խաղահրապարակի կառուցում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
12	Փարաքար	Պտղունք բնակավայրում գոյություն ունեցող 2 խաղահրապարակների վերանորոգում և վերազինում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ
13	Փարաքար	Փարաքար բնակավայրում 1 խաղահրապարակի կառուցում և Փարաքար և Թաիրովում գոյություն ունեցող 4 խաղահրապարակների վերանորոգում և վերազինում	100% - ավարտված (2023թ.)	առկա է շահագործման ակտ	առկա չէ

Բաղրամյան

h/h	*Համայնքը*	*Ենթածրագիրը*	*Կատարված աշխատանքներ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ձևակերպման վերաբերյալ ձեռնարկվող գործողություններ*	*ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ առկայությունը*

1	Բաղրամյան	Հուշակերտ գյուղի մանկապարտեզի սեյսմազինվածության բարձրացում և վերանորոգում	100% - ավարտված (2023թ.)	Ընթացքի մեջ է	առկա չէ

Դատական գործերի վերաբերյալ, որոնցով մարզպետի աշխատակազմը հանդես է գալիս որպես պատասխանող կողմ զեկույցով հանդես եկավ Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Լիաննա Հարությունյանը.

Նա ներկայացրեց, որ ընդհանուր առմամբ այս պահին ընթացքի մեջ են 12 գործ, որոնցից մեկը քրեական գործ է, որով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը հանդես է գալիս որպես տուժող, մյուս գործով Մարզպետի աշխատակազմը ՀՀ Կառավարության կողմից հանդես է գալիս որպես 3-րդ անձ / Կառավարության աշխատակարգի համաձայն, եթե ՀՀ կառավարությունը ցանկացած դատական ատյանում հանդես է գալիս պատասխանող կողմ կամ 3-րդ անձ, ապա ընթացակարգով սահմանված կարգով պետական լիազոր մարմնի ղեկավարները, այդ թվում մաև մարզպետի աշխատակազմը լիազորվում են որպես կառավարության ներկայացուցիչ հանդես գալու/:

Այսպիսով՝ սույն թվականի հոկտեմբեր ամսին մարզպետի աշխատակազմը հանդես է գալու որպես 3-րդ անձ՝ պատասխանող կողմը Արմավիրի համայնքապետարանն է, նախկին շրջգործկոմի որոշման բողոքարկում՝ բնակարանի հետ կապված խնդրով:

Քրեական գործի շրջանակներում դեռևս ՀՀ Արմավիրի մարզպետարանը ճանաչված է եղել տուժող կողմ, իսկ ամբաստանյալ կողմ է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության նախկին պետը և նույն վարչության կրթության բաժնի նախկին պետը, ինչպես նաև «Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ/օժանդակ/ դպրոց» ՊՈԱԿ-ը, որը նախկինում եղել է Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ: Քրեական գործ է հարուցվել, որպես պաշտոնական դիրքի չարաշահում, իսկ Արմավիրի մարզպետարանը ճանաչվել է տուժող կողմ, այն հանգամանքով, որ պետությանը հասցվել է գրեթե 4000000 դրամի վնաս: Առաջիկա դատական նիստը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի 9-ին:

Մյուս գործերից չորսը քաղաքացիական գործեր են, որոնցից երկուսի դեպքում խնդիր է առաջացել կապված գնման ընթացակարգերի հետ, ըստ այդմ հայց է ներկայացվել՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանին պարտավորեցնել գնման կարգը համարելու կայացած և կնքելու համապատասխան պայմանագրեր: Վերոնշյալ գործերով մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացուցչություն չի ապահովվել և մի դեպքում արդեն կա վճիռ, որով պետական տուրքի գանձում է եղել, մյուս դեպքը դեռ դատական քննության փուլում է:

Մյուս քաղաքացիական գործով՝ Սյունիք ՍՊԸ-ի կողմից գումարի բռնագանձման պահանջ է ներկայացվել առաջին ատյանի դատարան՝ «Թաիրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների սրահի վերանորոգման հետ կապված: Գումարի բռնագանձման պահանջը կազմում է 3749000 դրամ, որից չվերադարձրածը 230000, տույժի հաշվարկը 3367000, պետական տուրքը 72000 և փաստաբանի ողջամիտ գումրը՝ 80000 դրամ:

Հաջորդ քաղաքացիական գործը վերաբերում է Արտակ Միքայելյանին, որը դատական ատյանում էր գտնվում 2018 թվականից, գործով եղել է մասնակի բավարարում՝ Արտակ Միքայելյանին 2018 թվականից մինչև 2019 թվականի մարտի 3-ի վճարումները, նաև պետական տուրքը վճարված է, սակայն մյուս գումարի պահանջը՝ 2019 թվականից մինչև վճռի ուժի մեջ մտնելը՝ ամսական 200000 դրամի պահանջը/ 75 ամիս, մոտավորապես 15000000 դրամ/հայցը սույն թվականի հունիսի 24-ին հրապարակված վճռով մերժվել է:

Վարչական գործերի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակզմի նախկին աշխատակից՝ Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Արտակ Առաքելյանի գործով Մարզպետի աշխատակազմի վերաքննիչ դատարան ներկայացրած բողոքը բավարավել է, նրա հայցը մերժվել է: Նույն վարչության գլխավոր մասնագետ՝ Նաիրա Սարգսյանի գործով կար հայցի մասնակի բավարարում, բողոք է ներկայացվել վերաքննիչ դատարան, սակայան դեռ չկա վարույթ ընդունելու որոշում:

Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության աշխատակից Սոս Մխիթարյանի գործով վերաքննիչ դատարան բողոք է ներկայացվել՝ ընդհանուր հայցը մերժելու պահանջով: Նույն վարչությունից Գոռ Մելիքյանի գործով ունենք մասնակի բավարարում՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի՝ աշխատանքից ազատման հրամանը անվավեր ճանաչել և չվճարված աշխատավարձի վճարման բավարարում, իսկ հարկադիր պարապուրդի վճարման մասով մերժվել է:

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-07-07 09:55:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան